


891.99.092

7-17L



ՅԶԴԶՏԱՍԿ

4746

*Handwritten notes and signatures in the top right corner.*

Գ. ԼԵՎՈՆՅԱՆ

# ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ

ՔԵՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏԵՂԾ, ՅԵՐԱԺԻՇՏ

**18-րդ ԴԱՐՈՒՄ**

**Ա Ր Տ Ա Տ Ի Պ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս. Խ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՎԵԱՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ՏԵՂԵԿԱԳՐԻ № 2-ԻՑ

ՅԵՐԵՎԱՆ

1927

891.99 092

Գ. ԼԵՎՈՆՅԱՆ

NOV 2011

9-172

պի

123

# ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ

ՔԵՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏԵՂԾ, ՅԵՐԱԺԻՇՏ

18-րդ ԴԱՐՈՒՄ

1003  
29216

Ա Ր Տ Ա Տ Ի Պ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս. Խ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՎԵԱՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ՏԵՂԵԿԱԳՐԻ № 2-ԻՑ

17 APR 2014

68.118

Գ. ԼԵՎՈՆՅԱՆ

ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ  
ՔԵՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏԵՂԾ ՅԵՎ ՅԵՐԱԺԻՇՏ  
18-րդ դարու 1)

ՄՈՒՏՔ

Հայոց գրականության պատմության հին՝ և վաղ-միջնադարի շրջաններն համեմատաբար ավելի բախտավոր են ուսումնասիրված լինելու տեսակետից, քան 16-18-րդ դարերի միջև յեղած ժամանակաշրջանը: Միջնադարի վերջերից մինչև 19-րդ դարի կեսերը՝ ճոր շրջանը, ժամանակի այդ ընդարձակ տարածությունը, դեռևս հանդամանորեն ուսումնասիրության և սպասում իր միջավայրով, իր քաղաքական ու հասարակական բաղձադիմի անցուղարձով: Հայ գրականության պատմա-բանասիրությանը զբաղվողները մի կողմից նյութեր են հավաքում այդ շրջանի գրականության վերաբերյալ մոռացության փողիներից յերևան հանելով մինչև այժմ աննկատելի մնացած՝ կամ ըստ արժանույն չը գնահատված՝ գրական դեմքերը, մյուս կողմից՝ գիտական-քննական ուսումնասիրության յենթարկում, վերադնահատում այնպիսիներին, վորոնք հայտնի են արդեն, և վորոնց մասին առանձին հոդվածներ և մոնոգրաֆիք աշխատանքներ կան լույս տեսած:

Մեր այս աշխատության նպատակն է Պաղտասար դպիր պոսեցուն, վոր յեղել է իր ժամանակի նշանավոր գրական դեմքերից մեկը և վորի մասին մինչև այժմ շատ քիչ բան և ասված՝ հրապարակ հանել, իր արժանի գնահատականը տալ, նյութ մատակարարելով մեր գրականության ապագա պատմագրին:

Մինչև 1912 թվականը, այսինքն Պարիզում Արշակ Չոպանյանի հրատարակությանը լույս տեսած «Հայ եջեր» գիրքը, ուր տպագրված են

1) Պաղտասար դպիր պոսեցու կյանքի ու գործի նկարագրը մեզ հետաքրքրել է 1919 թվից: Առաջին անգամ մեր պրոպագանդիստների հետեվանքի մասին արել ենք մի բանախոսություն թիֆլիսում, Հայաստանը, 1921-ին: Նույն նյութը, գրի առնված և լրացրած, ծառայել է մեզ վորպես զեկուցում թիֆլիսում, վիրահայ պատմա-ազգայնական ընկերության մի նիստում, 1924-ին: Յերբորդ անգամ արդեն, նոր հավելումներով և ավելի ճշակված, այդ աշխատությունը վորպես զեկուցում կարգացված է Գիտութ. և Արվեստի Ինստիտուտի Գ. Բաժնի մի նիստում, այս տարի փետրվարին:

ՀԱՅՊՈՂԻԳՐԱՖԻ Զ.ԲԳ ՏՊԱՐ.  
ՊԱՏՎԵՐ № 3919.  
ԳՐԱՌ. № 139 (բ)      ՏԻՐԱԺ 100.

Պաղտասար դպրի տաղերից 14 հատ. այս հեղինակից տպագրված տաղեր մեզ հայտնի էյին Մ. Միանսարյանի «Քնար Հայկականի» մեջ յերկուսը՝ (Մասկվա 1868) և Ա. Տեվկանցի «Հայերգի» մեջ՝ մեկը, (Թիֆլիս, 1883): Հայտնի էր նույնպես, վոր կա նաև «քերականութուն» Պաղտասար դպրի, Պոլսի տպագրութուն: Մենք պիտի աշխատենք գտնել թե բանաստեղծ Պաղտասարը և քերական Պաղտասարը նույն մարդը չե՞ արդո՞ք, և ապա գտնել նրա մասին կենսագրական տեղեկութուններ: Պրպտումները մեզ հասցրին հաջող հետևանքի. պարզվեց վոր Պաղտասար դպիրը յեղել է բանաստեղծ, քերական, մատենագիր, ուսուցիչ և յերաժիշտ. յեղել է իր դարի արևմտահայ անվանի գրագետներից մեկը և թողել և բավական աչքի ընկնող գրական ժառանգութուն:

I. ԿԵՆՍԱԳՐԱԿՍՆԸ

Կեսարացի հյուան Գրիգոր և կինը՝ Թուրվանդ, 17-րդ դարու վերջին քառորդում գաղթում են Կ. Պոլիս. վորդին, Պաղտասարը ծնվում է Պոլսում մոտավորապես 1680-ականների վերջերին:

Քսան տարեկանի մոտ պիտի յեղած լինի նա, նախնական կրթութուն ստացած ու արհեստով կոշկակար, յերբ, 1707 թվին, գարնանը, Պոլիս է գնում «ծայրագոյն նուիրակ էջմիածնի» Աստվածատուր վարդապետ Զուղայեցին, վորի մոտ, ի թիվս այլ պատանիների, աշակերտում է և Պաղտասարը:

Ո՞վ էր այդ վարդապետը և ի՞նչ առաքելությամբ էր գնում Պոլիս: Ալեքսանդր Ա. Զուղայեցին, իր կաթողիկոսության մի տարին դեռ նոր լրացած, միտք է հղանում տպագրել տալ Ազաթանգեղոսը: Այդ նպատակի համար Պոլիս ուղարկելու հարմարագույն մարդը նա գտնում է իր համաքաղաքացի և «ձեռնասուն աշակերտ» Աստվածատուր Աղամիր կոչված գիտնական վարդապետը: Եջմիածնից Աստվածատուր վարդապետը, իր հետ վերցնելով կաթողիկոսի ձեռքով ընդորինակած Ազաթանգեղոսի ձեռագիրը, հասնում է Պոլիս 1707-ի ապրիլի 7-ին, սակայն «խոռովութիւնք քաղաքին» թույլ չեն տալիս անմիջապես գործի անցնելու:

Յերևում է, մինչև այդ խոռովութունների դադարումը, նա Պոլսում, իր տանը մասնավոր դպրոց է բաց անում, վորտեղ և սովորում է Պաղտասարը: Ազաթանգեղոսի ձեռագիրը տպարան և հանձնվում յերկու տարի յետո, այն է 1709-ի մարտին և լույս է տեսնում Գրիգոր Մարզվանցու տպարանից 1710-ի ապրիլի 1-ին:

Նայելով Պաղտասարի հայագիտության, պետք է կարծել վոր Աստվածատուր Աղամիր ընտանեկան դպրոցն յեղել է իր ժամանակի համար լավագույն դպրոցը. իսկ ինքը, Աստվածատուրը թե ի՞նչ տեսակ յեռանդուն ուսուցիչ է յեղել, այդ մասին յերախտապարտ տողերունի գրած ինքը Պաղտասարը 30 տարի հետո, իր Քերականության Բ. հատորի վերջաբանում—

«Եւ արդ՝ ո՞վ ընթեցասէր որդիք սիօնի. մինչ ողորմութեամբ տեսան օգտեսջիք ինչ ի սմանէ, զանձանձիր վարժապետն իմ, հեղահոգի դաստուա-

ծարան Աստուածատուր վարդապետն ջուղայեցի, ի սուրբ աղօթս ձեր յիշեաչիք ի Տէր . . . որ ի 1155 թվին հայոց<sup>1)</sup> . . . ևկն ի Կոստանդնուպոլիս, ծայրագոյն նուիրակ աստուածաէջ գահին . . . եւ աստ ի Կոստանդնուպոլիս ընդ այլոց յեղբարց՝ առ ի վարժել զանվարժ խակութիւն տհաս հասակիս, բազում աշխատանս աշխատեցաւ: Որն դաս ասելոյ այնքան ուներ փոյթ, մինչ զի թէ ի ժամ ճաշոյն հանդիպէր, թողոյր զուտելն եւ վճարէր խրատն, որոյ հոգին լլցէ Տէր ողորմութեամբ իւրով»:

Վերջան ժամանակ է ուսել Պաղտասար «առ ոտս» Աստվածատուր վարդապետի, հայտնի չէ. բայց վոր կոշկակար Պաղտասարն հետագայում դառնում է իր ժամանակի հայտնի հայկաբանը, քերական և ուսուցիչ, սրբագրիչ բազմաթիվ գրքերի, յերևում է վոր մեր ուսանողն իր տարիներն անց է կացրել արդյունավոր կերպով:

Հովհաննես Կոլոտի պատրիարքության ժամանակամիջոցը (1715-41) նկատված է Կ. Պոլսի հայ կրթական ու գրական զարգացման սկիզբը, և այդ շրջանում է, վոր Պաղտասար ստեղծել է իր համբավը:

Ի՞նչ են ասում պոլսական աղբյուրները Պաղտասարի մասին:

— «Աստվածատուր վարդապետն ալ . . . վոր 1706-ին<sup>2)</sup> միջոցները նվիրակ յեկավ Եջմիածնեն Կ. Պոլիս և վորուն համար կը վկայվի թե բանասիրական ու փիլիսոփայական ուսումներու նախասկիզբներն սովանգեց ըստուհարար Կ. Պոլսի պատվիւրներուն. իսկ առաջին աշակերտն հասավ Պաղտասար մատենագիր ու լեզվագետ պատվիւրն՝ զպիւր ըսված հատկապես, վոր եւ՝ Նալյան պատրիարքի գրան գրագեթը, ժամանակակից մատենագրական հրատարակությանց մենտորը: Պաղտասար գրած է շատ գործերու հետ ընդարձակ պատմութուն մը տոհմային, վոր աներևույթ յեղած է . . . Պաղտասար դպիր Պոլսո ամենեն բազմահմուտ և բազմասան վարժապետն եղաւ<sup>3)</sup>»

— «Պաղտասար դպիր, պահպանիչ ուղիղ հայերեն լեզվուի ի հրհեղեղ Հրով Յովհաննէսի և Սեբաստացի Մխիթար արքայի, պատուելի մականուննեալ, հեղինակ փոքրիկ, այլ սակաւավրէպ քերականութեան, զոր երախտագետ. հ. Միքայել Զամչեան ծայրերիծայր իւրացուցեալ է, այլ զլացեալ և ի չափ տողի միոյ անգամ տեղի անուան նորա կամ բանասիրական աշխատութեանց իւրում ճշմարտախօս պատմութեան»:<sup>4)</sup>

— «Պաղտասար դպիր իր ժամանակին Պոլսո զլլաւոր հայագետ քերականը յեղած է, ուսուցիչ է տպարաններու սրբագրիչ: Հովհաննես Կոլոտի որով և հրամանով Պաղտասար դպիր հսկած և մաշտոցի մը տպագրության հինգ վեց հնագույն որինակներ համեմատելով: Նույնպես սրբագրած է Պարպմանց գիրք (1721) Զինոր Գլակ (1719) Հարանց վարք (1721) Յայտաւութիւրք (1718):<sup>5)</sup>»

1) Պետք է լինի 1156 (սէճգ)  
 2) Պետք է լինի 1707-ին  
 3) Մրմրեան. Մասն. պատմ. հայ մեծատուներու 58 և 88  
 4) Պատկանյան Գարբիել. «Ծաղկաբաղ»—էջ 11  
 5) Ընդարձակ որացույց Ազգ. հիվանդ. 1901. 137

— Վոմն դպ. Սարգիս, իր պոլսակաճ պճուլսի մեջ, նկարագրելով Էտիր-  
նէ Գարուի Ազգ գերեզմանատունը, ասում է— «Գոն աստ և շիրիմք վարդապե-  
տաց ոմանց, յորս առաջինն է Դանիէլ վարդապետ... տապանաքար նորին  
շքեղացեալ է գերեզմանատան անդ (1747), վորոյ ոտանաւորն շինեալ է  
աճուաճի զպիրն Պաղասար» (առաջ է բերված այդ տապանագիրը):  
Հանդ. Ամս. 1912. էջ 646.

Նալյան պատրիարքը (1754—64) Գումգափուլում հիմնում է մայր դըպ-  
րատուն, ժամանակի կենտրոնական բարձր դպրոցը (տես Տաշյան Յուզակ  
118). այս դպրոցում դասախոսելու հրավիրվում է Պաղտասար դպիրը: «Այս  
նշանավոր վարժապետը ունեցած է բազմաթիվ աշակերտներ, եկեղեցական,  
վարժապետ և հարստի զավակ— գրում է մի անանուն հոգվածագիր,— վո-  
րոնք Պաղտասար դպրի ընդարձակ հմտութենեն ոգտված են»: 1)

— «Այս վարդեմի գրաբարեան դպրին վարժարանին մեջ ճախարակ-  
ուեցան Սիմոն կաթողիկոս, Բասենցի Յարութիւն՝ վարդապետ, իմաս-  
տասեր Պետրոս վարդ. Բերթումեան, Թազուր վարժապետ (Ներսես Աշտա-  
րակեցու ուսուցիչը), Ղափանցին, Բարսեղ Կեսարացի և Սահակ Ահագին  
ըսուածք»: 2)

Պաղտասար դպիր, ինչպես յերևում է, իր ժամանակին ունեցել է  
ազգային-հասարակական շրջաններում վորոշ դիրք, թե պատրիարքարանի  
ու ազգային ջոջերի և թե ասնաֆնների ընթացիկ կյանքում. նրա կարծիք-  
ները հաշվի յեն առել և նա նամակագրության մեջ է յեղել նույնիսկ Եջ-  
միածնի Սիմոն կաթողիկոսի հետ:

Աղանյանի զիվաններից մեկի մեջ (գ. գիրք) հիշատակվում է 5 նա-  
մակ, վոր կաթողիկոսի կողմից գրված է Պաղտասարին.—

- ա. 1764-ին.
- Առ տիրացու Պաղտասարն շնորհալի. էջ 42.
- բ. 1765-ին.
- Առ տիրացու Պաղտասարն շնորհակալութիւն և օրհնութիւն վասն յղյալ  
աջնամբոյրին. էջ 259
- գ. 1766-ին.
- Առ իփակճոց ասնաֆն ի ձեռն տիրացու Պաղտասարին, աւթիւ առաք-  
մանն 2 ֆնտուխ ոսկոյ, վասն աղքատաց և կարոտելոց. էջ 486.
- դ. 1767-ին.
- Թուղթ առ Պաղտասարն տիրացու վասն խարեբայի ումեմն որ եկեալ  
աստ, թոռն ձեացաւ նմա. էջ 584.
- ե. 1767-ին.
- Առ տիրացու Պաղտասարն որ տուեալ էր կտակ եղբօրն. էջ 740.

Ինչպիսի կյանք է անցկացրել Պաղտասարը. ըստ յերևույթին վնչ  
խաղաղ. այդ պարզվում է նրա մի քանի յերգերից, վորոնց մեջ զանգատ-  
վում է իր դառը կյանքից: Պատրիարքարանի շուրջը յեղած ինտրիգների

1 Ընդար. օրացույց Ազգ. հիվանդ., 1901. էջ 146  
2 Մըմբեան. Մասն. պատմութ. հայ մեծատ. էջ 88:

և քաղաքի հայ ազգային-յեկեղեցական անցողարձը պատկերացնող կնճ-  
ռոտ խնդիրների վորոտում բանաստեղծ Պաղտասարը չի կարողացել անե-  
րեր մնալ. մի կողմից կաթողիկոս, պատրիարք, ամիրաներ, աղաներ՝ վո-  
րոնց հետ մոտ իր պաշտոնով և դիրքով, մյուս կողմից արհեստավորներ  
ու համալներ, վորոնց հետ մոտ իր հոգով և իր սոցիալական ծագումով:

«Ի մեջ երկոքին ներհակաց անկեալ տարուբերիմ գերիս»—ասում է  
նա իր տաղերից մեկում:

Վորքան է ապրել Պաղտասար, և նրա մահվան թվականը:  
Պոլսական աղբյուրներից՝ կան, վոր գրում են թե նրա մահվան թվա-  
կանը հայտնի չէ. մինչդեռ մեկը գրում է շատ պարզ և վորոշ հետեյալը—  
«Տիրացու Պաղտասար պատուելի, այր իմաստուն և դաստիարակ  
բազմարդիւն, որդի հիւսան Գրիգորի Կեսարացույ, աշակերտեալ Աստուածա-  
տուր պերճիմաստ արքեպիսկոպոսի (°) և նուիրսկի սրբոյ գահին Էջմիած-  
նի... հասեալ ի բարոք ձերութեան, իբր ուրսուց և հիճգ ամաց հանգեալ  
ի Քրիստոս յամի Տեառն 1763 և թաղեցաւ պատուով գերեզմանատունն վոր  
կոչի Պալլըխը»: 1)

Այս աղբյուրից է վերցրել անշուշտ Մըմբյանը, վոր իր վերոհիշյալ  
գրքի մեջ կրկնում է նույն 1763 թվականը:

Մեզ թվում է, վոր այստեղ թյուրիմացություն կա. 63-ը տպարանա-  
կան սխալ չէ՞ արդյոք, 69-լինելու փոխանակ. ինչո՞ւ. վորովհետև նախ  
1767-ին Պաղտասար դպիր դեռևս նամակ էր ստանում Սիմոն կաթողի-  
կոսից, ապա 1768-ին լույս է տեսել նրա տաղարանի 3-րդ տպագրություն-  
ը, վորի հիշատակարանից չի յերևում վոր հեղինակը մեռած է յեղել,  
ինչպես այդ յերևում է նրա քերականության 2-րդ տպագրությունից,  
վոր լույս է տեսել 1771 թվին. և յերրորդ՝ յեթե ընդունենք, վոր Պաղ-  
տասարն իրոք մեռել է 1763 թվականին, 85 տարեկան հասակում, այդ  
հաշվով նա ծնված պիտի լիներ 1678-ին և ուրեմն Աստուածատուր Աղավ-  
նու դպրոց մտած (1607) ժամանակ 30 տարեկանին մոտ մի տղամարդ, մինչ-  
դեռ ինքն ասում է «անվարժ խակութեան տհաս հասակիս»:

Մնում է նրա մահվան թվականը վորոնք 1768-ի և 1771-ի մի-  
ջոցներում:

ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Քաղասար դպրի առանձին գրեթով լույս տեսած գրական գործերը,  
ժամանակագրական կարգով.

1. Տաղարան . . . . .	1723 թ.
2. Նույնը Բ. տպագր. . . . .	1734 »
3. « Գ. » . . . . .	1:68 »
4. Քերականություն, Ա. հատոր . . . . .	1736 »
5. « Բ. » . . . . .	1736 »

1) Քերական. հայոց լեզուի Մեսր. ք. Տեր-Յարությունյանի, Կ. Պոլիս, 1826, էջ:

- 6. Շահաւէտ . . . . . 1750 »
- 7. Յանկգիրք . . . . . 1753 »
- 8. Համառօտ քերակ. «աշխարհար.» . . . 1760 »
- 9. Պարզաբանութ. քերական. Ա., բ. տպ. 1771 »
- 10. Նույնը Բ., բ. տպագր. . . . . 1771 »

մասին հետո

Այս հրատարակութիւններէն «Շահաւէտ»-ը մեզ չհաջողվեց ձեռք բերել. յերևի դա այն նամակագիրքն է, վորին Պոլսական աղբյուրներից մեկը կոչում է «բարեկարգը»: Յանկգիրքը տեխնիքական մի աշխատանք է, Նոր Կտակարանի մեջ յեղած բոլոր առանձին իմաստների ցանկը, 10,512 տող: Մեր զեկուցման նյութը պիտի կազմի Պաղտասարը վորպես քերական և մանավանդ վորպես բանաստեղծ և յերաժիշտ:

### II. ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ—ՔԵՐԱԿԱՆ

Կլասիկ դարերում հայտնի յե վոր քերականութիւնը մի առանձին գիտութիւն եր համարվում. քերականագետները-(գրամմատիկոսները) գիտականի մեծ համբավ եյին վայելում և նրանց գործերը թարգմանվում զանազան լեզուներէ:

Հոչակավոր հույն քերական Դիոնիս Թրակացին ծանոթ անձնավորութիւն եր Հայաստանում դեռևս մեր վոսկիզարի ժամանակ. նրանով զբաղվել են ու նրա քերականութիւնը մեկնութիւններով լուսաբանել մեր քերթողները Դավիթ Անհաղթից մինչև Գրիգոր Մագիստրոս, մինչև Հովհաննես Յերզնկացի, Համամ Արևելցի և Յեսայի Նչեցի:

Պաղտասարի ժամանակներում քերականութիւնը դեռևս առանձին գիտութիւն եր ու քերականութիւն հեղինակները վայելում եյին փիլիսոփայի ու քերթողի անուն: Անշուշտ մեր հեղինակը իր ժամանակին հայագետի, լեզվագետի անուն է ստեղծել իր քերականութիւններով, քան տաղերով, վոր արժանացել է հայոց լեզվի գասախոսութիւն հրավիրվելու Մայր զպրատուն կոչվող բարձր գպրոցը:

Առաջինն եր Պաղտասար, վոր հայերեն քերականութիւն եր տպագրում 1736 թվին:

Վորքան մեզ հայտնի յե առաջին քերականութիւնը կազմել է Կղեմես Գալանոսը (լատին հայագետ), վոր լույս է տեսել Հռոմում 1645 թվին: Յերկրորդ քերականութիւնը տպագրվել է 1666-ին Ամատերգամում, յերրորդը 1691-ին Լիվոնոյում: Լույս են տեսել դարձյալ քերականութիւն յերկու գիրք՝ Սիմոն Զուգայեցու՝ Պոլսում, 1725-ին և Մխթար Սեբաստացունը՝ Վենետիկում, 1730-ին: Այսպիսով, ուրեմն Պաղտասարի քերականութիւնը Ե-րդն եր, վոր լույս եր տեսնում:

Իր գրքի առաջաբանում յեղած հիշատակութիւնից յերևում է, վոր նրան խնդրել են այդ տպագրելը —

«Ի վաղնւց իսկ հետէ կամ էր ինձ թէպէտ գրել տետրակ մի քերականութեան գիւրալուր ոճիւ, սակս նորավարժիցն կրթութեան, սակայն տկարութիւն հիքոյս մտաց և զբաղումն աստի կենաց՝ օգնելով միմեանց, ոչ տային ինձ թոյլ՝ հավաքել զնոյն: Իսկ այժմ, սակս ստիպելոյ քանի մի

էղբարց ուսումնասիրաց՝ հարկեցա սիրով՝ զվաղեմի ցիր և ցան գրեցեալսն յինէն՝ հավաքել ի մի՝ և առնել զբքոյկ մի համառօտ իբր զնախակրթութիւն ինչ այրբենական և դոնակ մի ներածութեան առ կատարեալ շարագրածս նախնեացն մերոց քերթողաց՝ կամ առ մեօք իսկ փայլողաց»:

Պաղտասարի քերականութիւնը կազմված է 2 հատորների մեջ.

ա. Պարզաբանութիւն քերականութեան, կարճառօտ և դիւրիմաց՝ յաղագս նոր եկելոց ի ուսումն գրոց գիտութեան:

բ. Կիրառութիւն մասանցն բանին, որ է Շարամանումն ընդ իրեարս ըստ քերթողացն:

Մենք ըստ եռութիւն չենք քննելու Պաղտասարի քերականութիւնը, թե ինչ առավելութիւններ ունի նա նախորդ քերականութիւնների հանդեպ: Մենք միայն այսքանը կասենք, վոր մեր հեղինակը ոգավել է Զուգայեցու քերականութիւնից. այս մասին ինքը Պաղտասար գպիր հիշատակութիւն ունի իր բ. հատորի մեջ, երես 516:

Պաղտասարի քերականութիւն մեջ ել, ինչպես Գալանոսի, հոլովների թիվը 10-ն է, բայց նրանց մի քանիսը տեղափոխված, մի քանիսը կրում են նոր անուններ. մենք կը բերենք այդ հոլովները իրենց հերթով՝ ցույց տալու թե վորքան տարբեր են մեր այժմյան հոլովներից և կարգից:

Ուղղական, սեռական, գործիական, արտագոյական, հայցական, պատմական, սկզբնական, տրական, ներգոյական, կոչական:

Պաղտասար փիլիսոփայութիւն է անում, լեզվաբանական խնդիրներ լուծում. այդ յերևում է մի քանի տերմինների ինքնակամ ստուգաբանութիւնից. որինակ քերականութիւն բառը մեկնաբանում է քերել բառից. «գօրօրինակ՝ քերէ ճախարակն զփայտն, և խարտոցն զերկաթ և պղինձ և զայլ, այսպես և քերականութիւն որպէս թե քերէ վխօսս մեր առ ի լինել ուղղախօսութիւն»:

Այս խնդիրների քննութիւնը մենք թողնենք լեզվագետներին, մենք միայն մատնանշենք Պաղտասարի քերականութիւն այն, մեր կարծիքով, ամենաարժեքավոր բաժինը, ուր խոսվում է վերձագուրեան, առոգանութեան, սրոնուրեան յեվ սաղաչափութեան մասին:

Բանաստեղծ հեղինակը այս բաժնում ամենքից շատ ինքնուրույն է և ամենքից ավելի ուժեղ:

«Առոգանութիւն է կառավարող արտաբերութեան, որև կարէ՛ ասիլ՝ համ ասացուածոց. ասացաւ կառավարող, զի թարց առոգանութեան ընթերցուածն, է՝ որպէս ձի սանձարձակ առանոց կառավարողի, կամ որպէս նաւ ինքնաշրջիկ առանց հմուտ զեկողի»:

Սեռը—Առոգանութեանց են չորք՝ ոլորակ, ամանակ, հագագ, և նշանակ»:

Յեվ տալիս է դրանց մանրամասն բացատրութիւնները:

Յաղագս Տաղից—բաժնում հեղինակն առաջ է բերում տաղաչափութիւն արվեստի մանրամասնը, յերկար և սուղ վանկերը, պարզ և բարդ վոտերը, «հանգէտ և անհանգէտ» տաղերի ձևերը և այլն:

Ունի բազմաթիվ հայերեն տերմիններ, վոմանք առնված ուրբիշներից վոմանք նոր, ինքնուրույն:



14 տարի անց, 1760 թվին, Պաղտասար դպիր լույս և ընծայում իր «աշխարհաբար» քերականութիւնը, վոր իսկապես յեղել և նույն գրաբար քերականութիւնը, միայն աշխարհաբար մեկնութիւններով, իր ժամանակի ուսմական թյուրքախառն աշխարհաբարը: Ինչ և վոր լինի, 18-րդ դարի կեսերին սա մի մեծ նորութիւն էր:<sup>1</sup>

Այս գործի հիշատակարանում ևլ Պաղտասար իր անվան հետ հիշատակում և իր վաղեմի ուսուցչի, Աստվածատուր Աղափնի վարդապետի անունը:

«Աղաչեմ ուրեմն յիշել զտպել տուողն և զտպողն սորին ընդ մեղաւոր իմոյ հոգւոյս Պաղտասարի միով Հայրմերիւ ի Տէր: Եւ զանձանձիր վարժապետն իմ հեղահոգի զԱստուածատուր աստվածաբան վարդապետն Զուղայեցի»:

Ահա մի լեզվական նմուշ Պաղտասարի աշխարհիկ քերականութիւնից.

«Գրոց բան հասկընալու սէր ունեցող փոքրիկ տիրացուներուն համար է այս փոքրիկ քերականութիւնս: Որ թե զայս կարդան և սորվին, զմեծ քերականութիւն հեշտ կու հասկընան: Եւ ով որ քերականութիւն չէ կարդացեր, անոր կարգացողութիւն պակաս կը սեպվի ի մեջ կարգացողաց, ինչ զատար շատ բան կարգացած ու գիտցած ըլլայալն է: Զէրէ սա խօսքիս արժատը՝ եանի ասլը թէմելը որն է, կամ թե այս խօսքս քանի կերպ կըլլայ ըսեսնէ, չի կընար գիտնար: Եւ չիւնքի այսպես պիտանի բան և քերականութիւն, ասկից առաջ ողորմութեամբ Աձ-յ՝ մեր տկար խելքին կէօրէ քերականութիւն մը շարադրեցինք բացկեկ շարադրութիւնով որ փէք զօլայ կը հասկըցուի...»

1771-ին Պաղտասար մեռած էր արդէն. այդ թվին նրա զրաբար քերականութիւնը «վերստին տպագրութեամբ» լույս և տեսնում իր թոռան, դպիր Մեսրոպի շանքերով «ի տրիտուր լուսահոգի մեծ վարժապետին, հեղինակի գրքոյս և բազմերախտին հայկական ազինս, և մանաւանդ իմո անարժանութեան երկասիրութեամբ թոռան նորին զեռաբողբոջ հեղաբարոյ Մեսրոպ դպրի»:<sup>2</sup>

<sup>1</sup> Առաջին անգամ, հոլանդացի Հ. Սքրեոտեր Ամստերդամում, ուսումնասիրելով տեղական պարսկահայերի խոսած լեզուն, կազմում և այդ լեզվի քերականութիւնը և լատիներեն բացատրութիւններով հրատարակում վորպէս հավելված իր բուն գրաբար հայերենի քերականութիւն 1711-ին: Այդ գործը չի կոչվում քերականութիւն, այլ «համառօտ տեսութիւն հայոց քաղաքացիական լեզուի» (Synopsis linguae civilis Armenorum). 15 տարի անց, Մխիթար Մեքաստացի «հարկավոր և օգտակար ճանչցեր և աշխարհաբար լեզուի քերականութիւն մը շինել չափավոր ընդարձակութեամբ 1726-ին, վոր ձեռագիր պահուած և իր գրուածքներուն մեջ, և ինքը 1727-ին անոր համառօտը տպած և տաճկերեն բացատրութեամբ: Այտընյան. «Քնն. քերակ. արդի հայերեն լեզվի» էջ 321:

<sup>2</sup> Գաբրիէլ Պատկանյանն իր «Ծաղկաբաղ»-ի էջ 11-ի ծանոթութիւն մեջ ասում և վոր յեղել և և յերկրորդ Պաղտասար դպիր՝ «տիրացու պատուական կոչեալ, որ էր թոռ առաջնոյն»:

### III. ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ—ԲԱՆԱՍՏԵՂԾ

Հայոց գրականութեան պատմութեան մեջ վոչ մի տեղ չի հիշվում Պաղտասար բանաստեղծը. Զարբանալյան իր Բ. հատորում միայն մի քանի խոսք ունի ասած Պաղտասար քերականի մասին:

Պաղտասարի տաղարանը առաջին անգամ լույս և տեսել Պոլսում—ինչպէս վերևում ասացինք—1723 թվին, յերբ բանաստեղծը պետք և յեղած լիներ 30—31 տարեկան: Տասն և մեկ տարի անց, 1734-ին տաղարանը լույս և տեսել ր. տպագրութեամբ, իսկ 1768-ին գ. տպագրութեամբ:

Մեր ձեռքի տակ ունենք միայն վերջին, յերբորդ տպագրութիւնը. առաջինները չենք տեսել, մեզ հայտնի չի յերեք տպագրութիւնները ճիշտ միեւնոյն բովանդակութիւնն ունին, թե նոր յերգերի հավելվածներ կան ր. և գ. հրատարակութիւնների մեջ:

Մեր Պետքանգարանի գրական բաժնում, համար 399, կա Պաղտասար դպրի մի ձեռագիր տաղարանը, վոր գրված և 1879-ին, այսինքն տպագրված յերբորդ հրատարակութիւնից 131 տարի հետո. իր ժամանակին թիֆլիսում այս ձեռագրից և ոգտվել Զոպանյանը Լալայան ձեռագիր անվանելով: Մենք խնամքով համեմատեցինք. ինչպէս յերևում է այդ ձեռագիրը արտագրութիւն և տպագրված տաղարանից. նրա մեջ նույն կարգով տեղավորված են նույն տաղերը, Պաղտասարի աշխարհիկ տաղերից վաթսուներ. ուրեմն ուսումնասիրութեան համար այդ տաղարանը արժեք չունի<sup>1</sup>:

#### Պաղտասարի տաղերը

Ն կ ա ռ ա գ ի ը ը . փոքրագիր 1/32.  
—ա. էջ. փորագիր խորանանկար. վերեվը կիսաշրջանի մեջ Գրիստոս, աջ ձեռքով տեառնագրելով, ձախով բռնած յերկրագունդը. Գերեվը դուռ (երուսաղեմի) վրեն խաչափայտը. մեջ տեղում, շրջանակի մեջ, գրված է՝

Տ ա ղ ա  
ր ա ն  
փոքրիկ  
պղտար դպրի  
ասացեալ գա-  
նազան գունով

— ր. էջ. ամբողջ յերեսում Ավետման պատկերը.  
— գ. էջ. սկսվում և տեքստը, գլխին վերնագարդ, աջ կողմում՝  
**Տաղ ավեսեաց սրբոյ կուսից:**

Այսպէս շարունակվում և մինչև 28-րդ տաղը, բովանդակելով հոգևոր յիրգեր ըստ նոր կտակարանի. տաղ Ծննդեան, Զրօրհնեաց, Տեառնդառաջի,

<sup>1</sup> Պաղտասար դպրի անունով ուրիշ տեղեր յեղած տաղարաններն էլ՝ Եջմիածին, Վիեննա, նույն արժեքն ունին, ըստ յերևույթին, քանի վոր գրված են ավելի ուշ, քան նույն տաղարանի առաջին տպագրութիւնը:

Ծաղկազարդին, Համբարձման, Գալստեան Հոգևոյն, Վարդավառին, Վերա-  
փոխմանն, սբ. Խաչին, առ ս. Հոգին և 7 տաղ առ Յիսուս Բրիստոս: 23 և  
24-րդ յերգերը իր անձնականին նվիրելով, մինչև 45-րդ տաղը դարձյալ հո-  
գևոր յերգեր են՝ նվիրված Տիրամորը, Յով. Մկրտչին, Ստեփանոս Նախա-  
վկային, Գրիգոր Լուսաւորչին, Էջմիածնին, Եբուսաղէմին և այլն: Այնու-  
հետև 46-րդ տաղից մինչև 54-ը վերաբերում է իր՝ դարձյալ անձականին,  
իսկ ապա, մինչև 64-ը, վորով և վերջանում է առաջին մասը, խառն բո-  
վանդակութեամբ տաղեր են: Վերջին յերեսներում ցանկը և հիշատակարանը.

«Տպեցավ փոքրիկ տաղարանս ի Հայրապետութեան...» և այլն.  
Հաջորդում է յԵՔԿՐՈՐԳ, աշխարհիկ մասը նոր թվահամարով

Տ ա ղ ա ը ա  
ն ի կ  
Սիրոյ և կարօ-  
տանաց և այլ:  
Ի Պաղտասար դպրէ  
Ի վր զանազան  
գունոց

Պարունակում է 61 տաղ (վերջինը թուրքերեն), դարձյալ ցանկ, ապա  
հանրածանոթ «Կոռենկ» յերգը, վոր գրված է զատարկ յերեսները լեցնելու  
համար. «Եւ զրեցաւ աստ տաղս այս՝ առ ի լնուլ զպարապ երեսն թղթոցս»  
Մեզ համար մնում է անբացադրելի թե ինչու նույն տաղարանի մեջ նո-  
րից կրկնվում են նույն հոգևոր և խառն յերգերը աննշան փոփոխութեամբ  
ու ապա միայն գիրքը փակվում է հետևյալ հիշատակարանով—

Եւ արդ՝ փոքրիկ իմն տաղարանիկս՝ որ  
ունի տաղս կը. տպեցաւ... ի թվին(1217) ի փառս  
միոյն աստուծոյ. ծառայ ծառայիցդ աստուծոյ  
պաղտասար պարտաւոր դպիր.

Այժմ տաղարանը քննենք ըստ եյության.

Հոգևոր յերգերի վրա մենք չենք կանգ առնելու, վոչ թե նրա համար  
վոր հոգեվոր են, այլ նրա համար վոր նրանք իսկապես յերգեր չեն, այլ  
մի տեսակ սաղմոսներ, յերբեմն ձոններ, ոգա-ներ, դրված արձակ, և ազատ  
հանգերով: Մեզ թվում է թե Պաղտասար իր հոգևոր յերգերը գրել է մի-  
այն ժամանակի պահանջին զոհացում տալու համար և նրանց հետ միասին  
անցկացնելու իր անձնական, իր «սիրո և կարօտանաց» յերգերը: Չնա իր  
ժամանակն ու միջավայրը լավ ճանաչելով նույնիսկ քաշվում է աշխար-  
հիկ յերգերն հրապարակ հանելուց և արդարանում է թե այդ յերգերն ել  
ըստ ներքին զօրութեան» հոգևոր են:

• Իր գպիւ պատվանունը և հոգևոր դպրոցում դասատու լինելը, պատ-  
րիարքարանի պաշտոնեա և կաթողիկոսին բարեկամ լինելը բանաստեղ-  
ծին գրել են այնպիսի զբուրթյան մեջ, վոր նա ստիպված է յեղել սուս  
խոսել ժամանակի շար լեզուները լեցնելու համար:

Ահա ինչ է ասում Պաղտասարը—«Եւ արդ՝ որովհետև ի հոգևոյ բնա-

կան է և ի մարմնոյ զգալույ է բաղկացեալ մարդս, յես քանի մի հոգևո-  
րացն երգելեաց եղաք սակաւ ինչ մարմնականացն զուարճացուցչաց, որք  
ի պատեն պատեն ոչ են խոտելիք»:

Այսպիսի խոսքերով և արդարանում քերթողը իր «մարմնաւոր ուրա-  
խութեան» յերգերի համար:

Պաղտասար դպրի տաղերը (աշխարհիկ) ըստ բովանդակութեան կա-  
րելի յե բաժանել՝

- ա. սիրային.
- բ. բնութեան նկարագիր.
- գ. անձնական-անհատական. (իր կյանքը)
- դ. խրատական-բարոյագիտական.
- Մեծ տեղ են բռնում սիրային տաղերը.

Կա մի գլխավոր հանգամանք, վոր պետք է հիշել այստեղ նախ քան  
բանաստեղծից նմուշներ բերելը. այդ այն է վոր Պաղտասարը իր երգերը  
գրել է յեղած, իրեն ծանոթ յեղանակների վրա. այսինքն իր տաղերն  
հարմարեցրել է արդեն ծանոթ եղանակների. այդ մասին ինքը գրում է.

«Ծանիր աստ, սիրելի ընթերցող, զի բանք իւրաքանչիւր տաղից...  
ի վերա ձայնին գոլով շինեցեալք՝ յորժամ ի թիւ ընթեռնանին, ոչ այն-  
քան համեղ երկին: Զի զանազան հանգէտ և անհանգէտ չափաւորու-  
թիւնք նոցին՝ ի վերայ գունոցն վայելչանան: Նաև՝ եթե  
զյատուկ գոյն նորին ոչ գիտելով՝ այլ ինչ գոյն տացես նմա, ոչ  
այնքան ճոխափայլ արտաբերի, որպես իւր իսկական գունովն: Զի  
սոքին այնպիսիք են, որոց բանքն ի վերայ գունոց են շինեալք, և ոչ  
գոյնն ի վերայ բանիցն: Վասնորոյ պարտիս գիտել զգոյնն և այնու  
վարել զբանն, զի համեղ գայցե լսելոյ»:

Այս հանգամանքը սակայն չի նսեմացնում Պաղտասարի տաղանդը և կար-  
գացվելիս եւ նրա յերգերը ցուցադրում են իրանց գեղարվեստական արժեքը:

Լինելով հմուտ քերական, քաջ ծանոթ մեր կլասիկ մատենագրու-  
թյան, նրա յերգերի լեզուն հարուստ և թե բառապաշարով և թե շարա-  
հյուսական տարբեր ձևերով. բանաստեղծի վոճը վերամբարձ է, բայց վոչ  
խրթին, պատկերները ցուցադրված են գունեղ և միշտ վարպետորեն ներ-  
դաշնակված ձեվը բովանդակութեան հետ:

Վ Իր լեզուն, ինչպես կը տեսնենք, աշխարհաբար է, այն ժամանակվա  
գրաբարախառն աշխարհաբարը՝ համեմված ուսմական բառերով ու դարձ-  
վածքներով:

Ահա ձեզ նրա սիրո յերգերից մի քանիսը, խնդրում եմ ուշադրու-  
թյան առնեք տաղաչափական ձևերը և մանավանդ շիշտերը, յերբեմն նա-  
խավերջին վանկերի վրա, վոր հազվադեպ և մեր բանաստեղծութեան մեջ  
և հաճելի թարմություն է տալիս հնչյունաբանական տեսակետից.—

Զիս քո սիրոյն, ով նազելի, հովերն առեր կու մաղէ,  
Օտարին լեզուն աւելի ցաւ կղեր գիս կու դաղէ.

Այս կարօտուս չի դիմացվիլ միշտ ըզհոգիս—կու քաղէ.

Իեպ ի երկիրն իմ սիրելոյն առնէր տանէր հովն գիս,

Իեպ ի յայգին իմ նազելոյն փչէր տանէր քամին գիս:

Խղճալի այն և ցավալի թռչնակին ես նման եմ,  
 Որ սիրովն իմ կարմիր վարդին յարակ ի սուզ մտանեմ,  
 Ի սար ի ձոր շրջաբերիմ, ինդրեմ և ոչ գտանեմ,  
 Դէպ ի երկիրն իմ սիրելոյն առնէր տանէր հովն զիս,  
 Դէպ ի յայգին իմ նազելոյն փչէր տանէր քամին զիս:

Արաթև թռչնակ լինէի, թռչէի ուր կամէի,  
 Կամ ի յայգին իմ սիրելոյն փչող քամին լինէի.  
 Թեթևիկ ամպիկ պիտէի հովուն առջև ի յնէի,  
 Դեպ ի երկիրն իմ սիրելոյն առնէր տանէր հովն զիս,  
 Դեպ ի յայգին իմ նազելոյն փչէր տանէր քամին զիս:

Այս բոցոյս թե ծովեր կապեն չը գիտէ իսկի մարիլ,  
 Այլ հանապազ նոր ի նորո ըսկսանի ի վառիլ.  
 Ձինքն այլ տեղ, հոգին այլ տեղ, մի կարէ կալ դադարիլ:  
 Դէպ ի երկիրն իմ սիրելոյն առնէր տանէր հովն զիս  
 Դէպ ի յայգին իմ նազելոյն փչէր տանէր քամին զիս:

էջ 2.

Մէկ աղն ըսի մի սէրքն կայ ի գլխիս,  
 Գիշերն է յերազիս, ցերեկն է սրտիս.  
 Կորուսեր իմ զիմ աննման սիրելիս,  
 Անոր համար կու պտըտիմ ի սարերն, ի ձորերն:

Ի միտս որ գայ կու թռչի խելքս, ի գլխէս,  
 Աչերս արիւն կու բոլորի ի սրտէս,  
 Ղարիբ եմ ես որ ելեր եմ իմ երկրէս,  
 Անոր համար կու պտըտիմ ի սարերն ի ձորերն:

Այգի եմ տնկեր ու վարդ եմ բուսուցեր,  
 Ապառաժներ կտրեր, ջուր եմ վազցուցեր,  
 Ձիմ աննման սիրելիս եմ կորցուցեր,  
 Անոր համար կու պտըտիմ ի սարերն ի ձորերն:

էջ 27

Ի նրնջմանէդ արքայական  
 Ձարթիր, նազելի իմ, զարթիր,  
 Է հաս նշոյլ արեգական  
 Ձարթիր, նազելի իմ, զարթիր:

Պատկեր սիրուն, տիպ բոլորակ,  
 Լրացելոյ լուսնոյն քատակ.  
 Ոչ գտանի քեզ օրինակ,  
 Ձարթիր, նազելի իմ, զարթիր...

Ղապին սրտիւ քանի կոծամ,  
 Է՛ վարդ կարմիր և անթառամ,  
 Տես թե զիարդ խղճալի կամ,  
 Ձարթիր, նազելի իմ, զարթիր:

Տապ և խորշակ ժամանեցին,  
 Ձթերթիկ գեղոյդ այրել կամին.  
 Քանզի էանց գիշերն մթին,  
 Ձարթիր նազելի իմ, զարթիր:

Է աննման իմ գովելիս,  
 Ի մէջ ականց գեղ քո մագնիս.  
 (Ի ոահեակ) սոյն թվակահանիս,  
 Ձարթիր, նազելի իմ, զարթիր: Էջ 34.

Տաղերի իր սիրած ծավալը 4 տունն է, յերբեմն 5 կամ 6. հազվադեպ  
 են 10 կամ ավելի տուններ: Իր անվան տառերը, վոր սովորությունն ունի  
 Պաղտասար տունների սկզբնատառեր շինել, շատ անգամ թողնում է կիսատ,  
 Պաղտ. ի պաղտէ և այլն, վոչ թե անպատճառ լրացնում ե:

• Բնության նկարագրությունը մեր բանաստեղծի յերգերի մեջ ավելի  
 գունեղ է և ավելի պայծառ. տարվա յեղանակներից գլխավոր տեղը զբա-  
 վում է գարունը, բնության արթնացումի, կանաչ կյանքի այդ հմայիչ յե-  
 դանակը: •

Ահա մի յերկու նմուշ գարնան յերգերից. —

Գարունն եկել՝ անուշ հովերն հնչեցին,  
 Սիրով վառեալ երեկ պիւլպիւլն ի յայգին.  
 Ի դէմ վարդին եղանակէր լալազին,  
 Բացուիր, իմ նազելի, տեսոյդ կարօտ եմ,  
 Ձարթիր, իմ աննման, գեղոյդ կարօտ եմ:

Գիշերն է անց, առաւօտն երևեցաւ.  
 Արևն ահա արեկից մօտեցաւ.  
 Երեկոյէն ի վեր սրտիկս հալեցաւ,  
 Բացուիր իմ նազելի . . և այլն:

Գերի լինիմ քո ամեն մէկ տերևուն,  
 Քենն ի գատ ինձ ոչ այլ ինչ երևուն.  
 Ձիտար ինձ լոյս առանց քո լոյսն արևուն,  
 Բացուիր իմ նազելի...

Ես քո փշովդ թե բիւր անգամ հարկանիմ,  
 Ի քո սիրոյդ թէ և ի հուր արկանիմ,  
 Ձայն ամենն ինձ անթիւ բարի վարկանիմ.  
 Բացուիր, իմ նազելի, տեսոյդ կարօտ եմ  
 Ձարթիր, իմ աննման, գեղոյդ կարօտ եմ:

էջ 20.

Պարուց թռչնոց տուք աւետիս,  
Միրուն գարունն երևեցաւ.  
Գեղեցկացեալ երևելիս,  
Աղին դրախտին նմանեցաւ:

Արի պիւլպիւլ, ո՞վ խղճալի,  
Հերիք ողբաս անյուսալի.  
Զի սիրելիս քո բերկրալի,  
Ի մեջ այգւոյն յօրինեցաւ:

Հեղիկ հնչեալ գարնան հողմոյն,  
Երբ ծաղկունս մեզ գոյն զգոյն.  
Զցօղիկն առեալ ի մեզմ ամպոյն,  
Տեսիլ վարդին պայծառացաւ:

Այլագանեալ հրես դաշտաց,  
Լերանց բլրոց բուսականաց,  
Լցեալ ծաղիօք գոգունք հովտաց,  
Երկիրս ամեն զարգարեցաւ... էջ 102

Անձնական յերգերը տաղարանի մեջ բռնում են բավականին զգալի տեղ. այդ յերգերի մեջ Պաղտասար դպիր տխուր և մեծ մասամբ, թախճութ. գանգատովոր և կյանքից ու շրջապատից ու մերթ հնչեցնում և ունայնութեան ձայներ... («Միրտ իմ ընդեր տրտում եղեալ» էջ 93) նա գրում թե ինչպես «քաղաքի անիրավ գատավորը» դատ և արել իրեն և զանազան պատիժների յենթարկել. բառացի հասկանանք արդյոք «կապումը», «գանահարումը»: Մենք կարծում ենք, վոր Պաղտասարի դեմ իրօք հալածանք և եղել. և այդ հալածանքը պետք է, վոր յեղած լինի «հոգևոր իշխանութեան» և աղաների կողմից, վորոնց բանաստեղծն է իր տաղերից մեկում ակնարկում և վորպես «անառակ դասեր»: Իր յերգերից մեկը Պաղտասար դպիր գրել է, «Գէորգ պատրիարքի խնդրանք». Գեորգը Լափանցին է, վոր պաշտոնավարել և կարճ ժամանակ, (1751—52) հետևապես յեթե Պաղտասարին հալածել են, այդ յեղած պիտի լինի Յակոբ Նալյան պատրիարքի (վոր պաշտոնավարել և Գեորգից առաջ և յետո) կամ Մինաս ակնեցու որով:

Կասկած չի մնում, վոր Պաղտասարի տաղերը կրում են իրենց վրա հոգևոր դասի ճնշումը. բայց և այնպես, բողոքի գիծը պարզ յերևում է: Նա խոսում և այլաբանորեն, յերբեմն շատ լակոնիկ. Գեորգ պատրիարքին նվիրած տաղի վրա գրել է «պատճառն երկար է»:

Ահա մի յերկու նմուշ նրա անձնականին վերաբերող տաղերից.—

Իմ անիրաւ գատաւորն քաղաքիս,  
Ոչ իրաւամբ վարեալ ընդ իս դատ առնէ.  
Թողեալ ի կամս իւր զախորժակն իմ ի յիս,  
Որ յամենայն բարւոյ զհոգիս գատ առնէ.

Զգեղեցկութիւն հոգւոյ իմոյ զառաջին  
Յինեն ի բաց կողպտելով գողըն հին,  
Եւ ոչ այնու շատանալով տակաւին  
Զմեղաց որակըն իւր յոգիս խատ առնէ...

Մինչ զբարին խորհիմ ընդիս մաքառի,  
Իբրու սաստիկ հուր բորբոքի և վառի  
Իսկ զիջանէ և բարկութիւն սպառի.  
Յորժամ անձն իմ զբարին թողեալ վատ առնէ  
Եւ առաւել հանգչի յորժամ շատ առնէ: էջ 82.

ՎԵՊ ՊԱՏԱՀՄԱՆՅ ԵՂԿԵԼԻ ՀՈԳԻՈՅՍ

Պատահելով գերոյս ասպատակք չարին,  
Զողորմելիս իսկոյն կալեալ կապեցին,  
Կապեցին, կապեցին, շրջապատեցին:

Ժողովեցեալ առիս այն զօրք խաւարին  
Զկապեցեալս ուժգին, ուժգին գանեցին,  
Գանեցին, գանեցին, կռփահարեցին:

Պայծառագոյն թագիւ է պճնացեալ  
Երանգ երանգ զարդուք գեղափայլեցեալ.  
Այն բանակ կորուսչին տարմաբար հասեալ,  
Զամենայն զփառս իմ յինեն խլեցին,  
Խլեցին, խլեցին, յափշտակեցին:

Ապա իմոյս անձին նախնի թշնամին,  
Էարկ զիս ի ներքին գուրըն սղմային.  
Այդ անողորմ, անգութ մեկնազէնք նորին,  
Զանազան սուսերօք հարեալ խոցեցին,  
Խոցեցին, խոցեցին, վիրաւորեցին:

Ահա հեղեալ սրտիւ ըզյորդ արտասուս  
Ազաղակեմ առ քեզ, աստված իմ Յիսուս.  
Զի վարելով զանձն իմ ի խորս անարկուս  
Ի յանգունդս աննշոյլս տարեալ իջուցին,  
Իջուցին, իջուցին և մահացուցին: էջ 80.

Ութսունն անցած դպիր ծերունին, մոռացած իր սերն ու գինին, մոռացած գարունն ու մարմնավոր ուրախությունը, վախենում և վերջին դատաստանից և գրում է իր սարսափելի ահեղ դատաստանը:

Օր անեղ, օր անեղ, օր անեղ.  
Յորում երկինք, յորում և երկիր տապնապաւ անցցեն.  
Եւ բնութիւնք ամենայն, և բնութիւնք հրդէհեալ լուցցին.

1005  
91726

Օր անեղ, օր անեղ, օ՛ր անեղ.

Յորում արեգակն և լուսին յորում, և խաւարեացին  
Եւ գորութիւնք երկնից և գորութիւնք համայն շարժեացին:

Օր անեղ, օր անեղ, օ՛ր անեղ.

Յորում անեղ դատաւորն, յորում և անթիւ գորօք երկնից եկեացե  
Եւ ամենայն որդիք մարդկան և ամենայն ոք անդ հաւաքեացին:

Օր անեղ, օր անեղ, օ՛ր անեղ.

Յորում արդարադատ, յորում հատուցանողն ի յանողորմ  
Ի յաթոռ նստեալ քննեացէ, վայ ինձ, վայ ինձ, վայ ինձ մեղաւորիս.

Օր անեղ, օր անեղ, օ՛ր անեղ.

Յորում և ոչ բոլէ մի, յորում ի կենաց մերոց, առանց քննութեան  
մնացէ.

Եւ ոչ ի կեա մի ի գործոց և ոչ առանց հատուցման իր կացցէ  
Յորում արդարքն ի կեանս երկնից, յորում մեղաւորքն ի տանջանս  
մեկնեալ երթիցին.

Եւ այն ի յաւիտեան և այն ի յաւիտեանս յաւիտենից:

Ի յայնմ աւուր անեղին

Ողորմեա, տէ՛ր, հոգոյ իմոյ բազմամեղի: Էջ 23.

ՏԱՂԱՉԱՓԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Բազմազան են Պաղտասարի տաղաչափան ձևերը. վորպես հմուտ քե-  
րական և տեսարան առաջինը ինքը խտտապահանջ և յեղել տաղերի վոտ-  
քերը, ցեղուրաները, վանկերը, հանգերն ու շեշտերը յենթարկելու պոետի-  
կայի որենքներին, վորքան կը ներեն այն «գույները» վորոնց հարմա-  
րեցրել է իր յերկերը:

Յերբ ծանոթանում ենք Պաղտասարի յերգերի չափ ու ձևին, տաղա-  
չափական կանոններին, մեզ համար պարզվում է մի վերին աստիճանի հե-  
տաքրքրական յերևույթ: Պաղտասարը միջնադարյան տաղասացների շա-  
րունակությունն է, գուցե վերջին ներկայացուցիչը մի կողմից, արևելյան-  
աշուղական յերգերի տաղաչափական որենքները հայոց մեջ առաջին կի-  
բառողը՝ մյուս կողմից: Շարականներ, հոգևոր «գանձ»-եր՝ մի կողմից, ա-  
շուղական մուխամբազներ ու գիվանիներ մյուս կողմից. մեր բանաստեղծը  
պատկանում է ուրեմն այդ փոխանցիկ շրջանին. նա իր շատ յերգերով մի  
տաղասաց է, ինչպես մի Թլկուրանցի, մի Աղթամարցի և շատ յերգերով էլ  
մի աշուղ, ինչպես մի Շիրին, մի Զիվանի: Ահա մի միւսագայտ, մի-  
այն առանց իր կրկնակ տողերի, կամ մի դալանգարի մուխամբագ,  
թե մեկը և թե մյուսը մեր աշուղների (թյուրքահայ գայրոցի) սիրած ձևերը:

Գարնան քո գալոյ ինձ ձմեռանս ստորանում միշտ,

Սըզով ընանիմ հառաչելոյ գոլով երաժիշտ. (Պաղտասար, յերգ 54)

— — — — | — — — — | — — — — | կամ 5—4—5 (14)

— — — — | — — — — | — — — — | 5—4—5 (14)

և շեշտերը հատածների վերջին վանկերի վրա.

Ահա աշուղ Զիվանու մի միւսագայտի երկտողը—

Տրտում ու ախուր շրջագայոյ անդադար եմ ես  
(Ո՛հ ապիկար եմ ես)

Տատրակի նման անընկեր, անմխիթար եմ ես  
(Բախտից օտար եմ ես)

Կամ նույն հեղինակի մի Ղալանգարի մուխամբացից.—

Աշխարհը բուրաս | տան և հատուկ | մարդիկը ծաղիկ  
Որքան մանուշակ | վարդ բալասան | կուզան ու կերթան:

Ահա և մի դիվանի՝ Պաղտասարից

Զիս քո սիրոյն սի նազելի հովերն առեր կու մաղե

— — — — | — — — — | — — — — | — — — — | կամ 4—4—4—3=15

Ահա ճիշտ դրա նման մի գիվանի ժամանակակից աշուղի՝

Իմ տարիքս անցնում են շուտ գլորվում են հանապազ

Ախ իմ հույսս, իմ փափագս կը համարվի միշտ յերազ...

ԿՎ. ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ—ՅԵՐԱԺԻՇՏ

Պոլսական ցանուցիք գրական աղբյուրների մեջ կային Պաղտասար-  
ներ Բերական, Կալկաբան յեզ ուսուցիչ, կար և Պաղտասար Բանասեղծ,  
մենք նույնացրինք այդ բոլորը մի անձնավորության մեջ, բայց Պաղտա-  
սար վորպես յեւածիւս, հիշված հին աղբյուրների մեջ, մեզ չի պատահել:  
Ա. Չոպանյան իր «Հայ էջերի»-ի մեջ, դեռևս Պաղտասարի կենսագրու-  
թյանը բողոքովին անձանոթ, իր տրամագրության տակ ունեցած նրա մի  
քանի յերգերից հասկացել է, վոր նա յերածիշտ է. «այդ յերգիչը հաւա-  
նականաբար երաժիշտ պետք է ըլլա», և միայն այդքան: Մեր պրպտում-  
ները այդ ուղղությամբ գրական հետեանքների հասցրին. նախ՝ վոր Պաղ-  
տասար-դպիր յերաժիշտ է յեղել, այդ արդեն վոչ թե հովանականաբար,  
այլ իսկապես. ամենից մեծ ապացույցն հենց այն է, վոր մեր վերևում  
բերած նրա մի յերկտողում, ինքն իրեն անվանում է այդպիսին—

Գարնան քո գալոյ ինձ ձմեռանս ստորանում միշտ,

Սըզով ընանիմ հառաչելոյ գոլով երաժիշտ:

Ապա նրա յերգերի յեղանակները (կամ ինչպես ինքն է ասում գույ-  
ճեղ) աչքե անցնելով մեզ համար բողոքովին պարզվեց նրա աշխատանքը  
յերաժառության բնագավառում:

18-19-րդ դարերում Կ. Պոլսի հայ յերաժիշտ տեսարանների թվին՝  
Պապա Համբարձում Լիմոնձյանի, Համբարձում Զերդյանի, Գր. Գարսոս-  
քալյանի, Արիս Հովհաննիսյանի և Նիկ. Թաշձյանի անուններին մենք  
կարող ենք ավելացնել և պետք է ավելացնենք Պաղտասարի անունը: Յեթե  
առաջիններն գրազվել են հայկական խաղերի, հայ նոտագրության ուսում-  
նասիրությամբ ու յեկեղեցական յեղանակների ձայնագրությամբ, վեր-  
ջինս, Պաղտասարը, տեսարան է արևելյան-ուսմանյան յեղանակների և  
ինքն էլ յերգիչ: Նա իր աշխարհիկ յերգերն հարմարեցնելով այդ յեղա-

նակներին, ինքն ել հորինել և իր սեփական յեղանակները և տարածել: Իրենց փոխազգեցություններով ոսմանյան և հայ յեղանակները մերվել են, դարձել ընդհանուր սեփականութուն թե թուրք թե հայ զանգվածների համար. այդ հանգամանքը շատ կարևոր և մոտիկ արևելքի յերաժշտության ուսուցիչության տեսակետից, թեև ավելի զժվարացնում և բանասերի աշխատանքը՝ գտնելու—խակական աղբյուրները, թե տվյալ դեպքում ո՞վ և ազդողը և ո՞վ ազդվողը:

Յեթե հայտարրը նույն այդ 18-19-րդ դարերում խոշոր ծառայություններ ունի մատուցած թյուրք պետության ու կուլտուրական կյանքի, քաղաքական, ֆինանսների կարգավորման, ճարտարարվեստի, թատրոնի, արհեստների ու տպագրական գործի ասպարեզներում, թյուրք աշուղական յերգ-յեղանակներն ել փոխադարձաբար մեծ ազդեցություն են ունեցել մեր աշուղական յերաժշտության վրա, տաղաչափության ձևերի և յեղանակների տեսակետից: Թյուրք յերաժշտությունը գուցե ազարտել և հայ յեկեղեցական յերաժշտության հարազատ կերպարանքը: Պոլսեցի Գեորգ Դ. կաթողիկոսի և նույնպես Պոլսեցի Նիկ. Թաշճյանի ձայնագրած շարականներն եջմիածնում, պարզ իրենց վրա կրում են ոտար ազդեցության կնիքը:

Իր տաղարանի մեջ Պաղտասար առաջ և բերում թյուրքերեն յերգերի մի ցանկ, իր յերգերի համապատասխան թվահամարների կարգով, ցույց տալու թե վոր յերգը ինչ յեղանակով պետք և յերգել: Թյուրքերեն յերգեր ասելով չպետք և անպատճառ կարծել, վոր այդ բոլոր յերգերն ու իրենց յեղանակները թյուրք հեղինակների յեն. շատ հայ հեղինակներ և ավելի շատ աշուղներ գրում էին թյուրքերեն և այդ շարունակվում եր մինչև 19-րդ դարի յերկրորդ կեսը: Պաղտասարի յեղանակացանկի մեջ կան և հայերեն անուններ, վորոնք անպայման պատկանում են իրեն. նման յերգերի համար նա ունի այսպիսի ծանոթություններ՝

«Այս նոր գունով ըսված է, լսել պիտի». կամ

«Այս ևս նոր գունով ըսվեցավ» և այլն:

Պաղտասարը մի քանի հայերեն յերաժշտական տերմիններ ունի յերգելու ձայնը կամ տեմպը վորոշելու. նա գրում է, վոր այս ինչ կամ այն ինչ յերգը պետք և յերգել «զղջական ձայնիւ», «խղճալի ձայնիւ», «ոլորեալ գունով», «գոյնգոյն» կամ «յորգորակ» և այլն:

Պաղտասար յերաժշտի մասին այսքանը միայն ասելով մենք հրավիրում ենք մեր մասնագետների ուշադրությունը: Ո՞վ գիտե գեռ վորքան Պաղտասարներ կան վորոնք սպասում են մոռացության փողիներից յերևան գալու ու մի նոր եջով զարդարելու մեր գեղարվեստի մոտիկ անցյալի պատմությունը:

« Ազգային գրադարան »



NL0380252

68.177

